# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, գ.Տեղ, 0284-96-2-20, tegh101@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՐՏԻ 2025ԹՎԱԿԱՆԻ N 053-Ա

### ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ, ՏԵՂ ԳՅՈՒՂԻ, 09-101-0062-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 2.047 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ԵՎ ՏԵՂԱԴԻՐՔԻ ՃՇՏՄԱՆ, ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 07.12.2017թ. թիվ 07122017-09-0007 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը, Տեղ համայնքի գլխավոր հատակագիծը, կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումը, «Վարդան Ենգիբարյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ***որոշում եմ.***

1. Ճշտել 09-101-0062-0003 կադաստրային ծածկագրով, 2.02885 հա մակերեսով հողամասի գծային չափերը, տեղադիրքը և մակերեսը համաձայն «Վարդան Ենգիբարյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի և 2.02885 հա հողամասի նկատմամբ ճանաչել Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

2. Կադաստրային քարտեզում հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու համար հիմք է հանդիսացել նշված հասցեի անշարժ գույքի համար տրամադրված 07.12.2017թ. թիվ 07122017-09-0007 անշարժ գույքի սեփականության

(օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականը և «Վարդան Ենգիբարյան» ԱՁ-ի կողմից կազմված, համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծը, որտեղ նշված հողամասի մակերեսը կազմում է 2.02885 հա, սակայն վկայականում նշվել է 2.047 հա:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը կադաստրային քարտեզում տեղադրվել է մոտավոր և տեղադիրքի ուղղմամբ չեն փոփոխվում անշարժ գույքի (հողամասի) միավորների նկատմամբ իրավունքների սուբյեկտները, անշարժ գույքի (հողամասի) միավորների որակական ու քանակական բնութագրերը:

4. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒԼՈՒՆՑ

2025թ. մարտի 17
գ.Տեղ